ղով» կոչուած մարմնի ապօրինի վարմունքի դէմ և գրանում է, որ խառն ժողովի՝ խմբագրութեանս դասցէին «սուտ» և «միտումաւոր» խօսքերը նախապաշարուած հոգիների երկանց արդասիք են, որպիսիներ, գիտենք, բաղմած են այդ խառն ժողովում։

Բողոքելով խառը ժողովի «միտումաւոր» վարմունքի դէմ՝ այժմ արդէն մենք ենք հրապարակաւ հարցնում նրանց. հապա ինչ է պատճառը, որ Օրմանեան սրբազանը, Կ. Պոլսի այդ անգիւտ քարոզիչը, մինչև այսօր դատապարտուած է տանը նստելու. խառը ժողովի պատասխանից յետոյ մենք այնուհետև կասենք մեր ասելիքը։

«ԼՈՒՄԱՑ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ԼՈՒՐԵՐ

—Լրագիրները հաղորդում են, որ Կ. Պոլսի ազգային ժողովը յետ է հրաւիրել հրաժարուած պատրիարք Ս. Եղիշէ եպիս. Դուեանին և Ն. ս. վերստին մտել է իւր պաշտօնի մէջ։ Վեհ. Հայրապետը շնորհել է ս. պատրիարքին արքեպիսկոպոսութեան տիտղոս։

—Միջնորդութիւն է յարուցուած Շամախի քաղաքում թոյլատրել բանալ հայոց վիճակային սեմինարիա, այս պատճառով, «Բագու» լրագրի ասելով, Շամախու քաղաքային վարչութեան լիազօրները որոշել են այդ դպրանոցի շինութեան համար յատկացնել քաղաքային գետինների դեսեատին, 1,100 քառասաժէն տարածութեամբ ձրիաբար, այն պայմանով. որ եթէ չբթոյլատրուի սեմինարիայի բացումը, գետինը յետ դարձնուի քաղաքին։

—Ցայտնի բարեգործ հանգ. Ա. Ս. Անանեանի որդիք Միհրան և Աբգար Անանեանները յայտնել են Զգրաշէնի ծխական Դպրոցի Հոգաբարձութեան, որ այս տարուանից իւրաքանչիւր տարի երեք հարիւր ռուբլի են նուիրում յիշեալ Դպրոցին։

—Այս օրերս ժողով է կայացել «Աղբիւր»-ի խմբագրատանը մեր վիպագիր պ. Շիրվանզադէի յօբելեանը տօնելու համար. բայց առայժմ առանց որևէ հետևանքի։

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Մոսկուա. Մ. Ջ.—սիրով կկատարենք Ձեր ցանկութիւնը։

Վաղարշապատ. Ռ. Պ.—ստացանք և կտպենք հետևեալ համարում։

Բաղու Սրմ. Ցակոբեան.—մինչև այժմ չստացանք Ձեզանից ցուցակը։

Մոսկուա Ա. Ս. Ձեր նամակը ստացանք, երբ յօդուածը տրպուած էր և շարուածքը ցրուած, ուստի և ներկայումս անհնար է արտատպել, թեև մի ուրիշ յարմար առիթով նորից շարել և տպել։

Խմբագիր Հրատարակիչ՝ ԳԻՒՏ Ա. Ք. ԱՂԱՆԵԱՆՑ